



Ե Ր Կ Շ Ա Բ Ա Թ Ա Թ Ե Ր Թ

ՀՀ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Մարտը սկսված է, բոլորս զինվոր ենք

Յուրաքանչյուր ոճրագործություն, անշուշտ, արժանի է իր օրինական դատաստանին, հատկապես՝ եթե այն իրագործվել է ոչ թե մեկ մարդու, այլ մի ամբողջ ժողովրդի հանդեպ, իրագործվել է ամենավայրագ ու մարդկային երևակայությունից դուրս ձեռքով: Նման ոճրագործությունները ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ ցեղասպանություն: Ցեղասպանություն ապրած ազգի համար անչափ կարեւոր է իր հանդեպ գործած հանցանքի ճանաչումը, հատկապես այն երկրի կողմից, ում ձեռքով իրականացվել է:

Հայերիս համար ցեղասպանություն եզրույթը 100 եւ ավելի տարիների վաղեմություն ունի արդեն, քանզի տարբեր պատմական ժամանակներում հայերի շարք իրականացրած Թուրքիան շարունակում է մնալ անդատաստան, ավելին՝ իրեն հատուկ կեղծարարի հմտությամբ փորձում է թող փչել քաղաքակիրթ աշխարհի աչքերին:

Անպատժելիության հետեւանքը եղավ Բաքուն, Սումգայիթը, Կիրովաբադը, Մարաղան... Թուրքիայի եղբայրակից Ադրբեջանը քաջ գիտակցում էր, որ կարելի է մի ամբողջ ազգ կոտորել, բայց մնալ անպատիժ, պատմական իրողությունը ներկայացնել այլ կերպ, ցինկ հայտարարություններ անել, լվանալ ձեռքերն ու ապրել քաղաքակիրթ ազգի դիմակով:

Ղարաբաղյան պայքարը կանխեց 100-ից ավելի տարիներ առաջ սկսված ցեղասպանությունը, որը պիտի շարունակվեր Արցախում:

Այսօր հազարավոր մարդիկ պահանջատեր են, որովհետեւ մինչ օրս ոճրագործություններին համապատասխան գնահատական չի տրվել, իսկ չդատապարտելը, անշուշտ, պարարտ հող է նոր ոճիրների համար:

Ցեղասպանությունների ճանաչման, դատապարտման ու հատուցման հարցում նշանակալից են քարոզչական աշխատանքները, որոնք պետք է կատարվեն ամեն օր, անխոնջ ու անդուլ, քանզի թուրքական եւ ադրբեջանական քարոզչամեթոդները շարունակում են ձեռք ձեռքի տված խեղաթյուրել պատմությունը, աշխարհով մեկ ներկայացնել իրենց «անմեղությունը», խոսում են իբր հայերի ձեռքով իրականացրած ջարդերի մասին, բարբառում են խոշալուխ «ցեղասպանություն» եւ նման այլ գառնանցանքներ, որոնք շատ հաճախ ժխտվում են հենց իրենց իսկ պատմաբանների կողմից:

Պատմությունն անհնար է ջնջել, մաքրել, տեղը գրել այն, ինչ ցանկանում ես, ինչ ձեռնտու է:

Թուրքիայի եւ Ադրբեջանի հայասպան քաղաքականությունը շարունակվում է նաեւ այսօր: Օրինակները շատ են, անպատժելիությունը՝ փաստ:

Այսօր աշխարհի տարբեր երկրներում տեղի են ունենում 1915 թվականի Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառումներ, իսկ Հայոց ցեղասպանության համահայկական հռչակագիրն արտահայտում է ՀՀ եւ համայն հայության պահանջատիրությունը:

Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումների մեկնարկին շատ կարեւոր է խոսել նաեւ ցեղասպանության հետեւանքների, նրա շարունակական էջերի եւ այսօրվա իրականության մասին: Չգոնություն է պետք՝ չեզոքացնելու թուրքական եւ ադրբեջանական հակահայկական լոբբին:

Այսօր երկու ոճրագործ պետությունները շփոթահար են: Նրանք նոր առիթներ են որոնում՝ շեղելու իրավիճակը, քաղաքական խաղեր են մոզոնում, Գալիպոլի ճակատամարտեր հորինում, ուժեղացնում ադրբեջանադարաբաղյան սահմանային լարվածությունը: Սա էլ բնական է, սա էլ թուրքի ու նրանից ոչնչով չտարբերվող եղբայրակցի վարքագիծ է, քանզի նրանք նույն «քաղաքակիրթ» հանցագործներն են: Նրանց խաղերը միշտ կեղտոտ են, նրանց պատմությունն իսկ արդեն աղտոտված է:

Ցեղասպանության 100-ամյակի շեմին՝ «Հիշում եմ եւ պահանջում» կարգախոսով սկսած պայքարում բոլորս զինվորներ ենք: Մարտը սկսված է, նահանջի հրաման չի լինելու: Հաղթանակը կոչվում է արդարություն:



Արցախը գերխնդիր է. Հրանտ Մարգարյան

Փետրվարի 28-ին՝ սումգայիթյան ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, Ստեփանակերտի փողոցները մարդաշատ էին: Մարդկանց հոսքը Ստեփանակերտի հուշահամալիր չէր դադարում: Հանրության բազմահազարանոց երթին միացան ԼՂՀ նախագահը, ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչը, պետական այրեր եւ Հայաստանի Հանրապետությունից արցախցիներին զորակցելու համար Արցախ այցելած մոտ 1200 դաշնակցականներ:

Ադրբեջանի ԽՍՀ-ում փետրվարի 27-29-ին կատարվածը որակվում է որպես ցեղասպանություն, քանզի համապատասխանում է ՄԱԿ-ի 1948 թվականին ընդունած Ցեղասպանության մասին կոնվենցիայի դրույթներին:

Ամենը մարդիկ սպանվել են միայն այն բանի համար, որ ազգությամբ հայեր են: Կոտորածները նպատակ ունեին խոչընդոտել Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ կարգավորումը: Դրանք ոչ այլ ինչ էին, քան պատասխան Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության խաղաղ ցույցերին, որոնց պահանջն էր՝ իրականացնել ինքնորոշման իրենց սահմանադրական իրավունքը:

«Արցախ կատարած մեր այս այցը ուխտագնացություն է,- խոսելով հենց Սումգայիթի անմեղ զոհերի հիշատակի օրն Արցախ կատարած այցի մասին՝ ասաց ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանը եւ հավելեց,- մենք Սումգայիթի տարեկան ցանկացանք նշել ազատ ու անկախ Արցախում, անկախ ԼՂՀ-ում, որովհետեւ այստեղ մեծ իմաստ կա: Մենք շարժվելուց հետո պետականություն ենք ստեղծել, եւ այս հայկական պետականությունը ստեղծել ենք, որպեսզի մեր ժողովուրդն այլեւս չկոտորվի, որպեսզի մեր ժողովրդի շարունակականությունը կարողանանք ապահովել: Մենք եկել ենք ուխտի, որ մեր ուխտը վերանորոգենք: Վերանորոգենք այն առումով, որ անցած 25 տարիներին Արցախի հետ ենք եղել, այսօր էլ պետք է Արցախի հետ լինենք: Մեր շարքերում կան մեծ թվով ազատամարտիկներ, ովքեր եկել են այդ ուխտը վերանորոգելու: Մենք այս պայքարը պետք է տանենք մինչեւ վերջ: Ծիշտ է, այսօր Ադրբեջանը սահմանին փորձում է մեզ պարտադրել մաշող եւ զգվեցնող պատերազմ, սակայն մենք հավատացած ենք, որ մեր ժողովուրդն իր միասնականությամբ, իր նոր ակտիվությամբ պետք է իր պատերազմով հաղթի ադրբեջանական այս պատերազմում: Կարծում եմ՝ մենք այսօր դարձյալ պատերազմի մեջ ենք, պարզապես մենք պետք է չտրվենք ադրբեջանական խաղի կանոններին, մենք պետք է ստեղծենք մեր կռիվը Ադրբեջանի դեմ, եւ դա պետք է ունենա համահայկական բնույթ: Մենք պետք է մեր բոլոր միջոցներով պարտավորեցնենք Ադրբեջանին, որ այս պատերազմում էլ ընդունի իր պարտությունը:

Արցախ կատարած ուխտագնացությունը նախ մեր հոգեփոխությունը պետք է օգտակար լինի: Սա նաեւ բողոքի ակցիա է՝ ընդդեմ Ադրբեջանի, ընդդեմ միջազգային հանրության: Եվ, հակառակ շատ ու շատ ասեկոսների՝ հայկական իրականության մեջ կա մի ուժ, որը Ղարաբաղի հետ նույնացած է, մի ուժ, որն առաջին օրվանից մինչ այսօր Արցախը համարել է իր գերխնդիրը եւ շարունակելու է այդպես համարել: Եվ թույլ չի տալու, որ հայկական իրականության մեջ որեւէ ուժ ծավալի այնպիսի գործողություն, որ Արցախը դադարի գերխնդիր լինելու:

Հրանտ Մարգարյանի խոսքերով՝ մենք այս կռիվ մեջ հոգնելու իրավունք չունենք.

«Կան ժողովուրդներ, ովքեր 30-40 տարի ի վեր ազգային ազատագրական պայքար են մղում առանց որեւէ արդյունքի: Մենք մեր պայքարի մեջ արդեն արձանագրել ենք անկախ հանրապետություն, իսկ սա մեծ առաջընթաց է, մեծ հաղթանակ է: Պարզապես՝ մենք չպետք է կորցնենք մեր հաստատակամությունը այս պայքարը մինչեւ վերջ տանելու իմաստով»:

ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչ գնահատմամբ՝ այն, ինչ կատարվել է Սումգայիթում, փաստում է ադրբեջանական վայրագությունը. «Սումգայիթում կատարվածն ապացուցում է, որ Արցախում անկախությունից զատ այլ ելք չկա, այսինքն՝ ադրբեջանցիների հետ համակցություն հնարավոր չէ: Եվ, այն ժողովուրդը, որը կազմակերպված չէ, այն ժողովուրդը, որն իր պետականության մեջ չի ապրում, այսօր էլ ելքակա է այդ վտանգին: Հենց դրա համար մենք պետականություն ենք ստեղծել: Մենք պետականություն ենք ստեղծել, որպեսզի մեր ժողովուրդն այլեւս չկոտորվի»:

Պաշտոնական տվյալներով՝ Սումգայիթում դաժանաբար սպանվեցին 27 հայեր, խոշտանգվեցին, թալանվեցին հարյուրավորները: Մեկ օրում փախստական դարձան ավելի քան 3000 հայեր: Սումգայիթում կորցնելով իրենց ունեցվածքը՝ հրաշքով փրկվածները մի կերպ կարողացան ապաստան գտնել Արցախում ու Հայաստանում:

Սումգայիթի ցեղասպանության փաստի ջողարկումը եւ միջազգային հանրության ներողամտությունն ու անտարբերությունը նպաստեցին, որ ոճրագործներն ու նրանց ուղղորդները խուսափեն արժանի պատժից, որի հետեւանքը Սումգայիթին հաջորդած հայերի նոր կոտորածներն էին՝ Բաքու, Մարաղա...

ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցչը՝ Միացյալ Թագավորությունում



Փետրվարի 22-ին ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը մասնակցել է Լոնդոնի «Նավասարդյան» կենտրոնում տեղի ունեցած ՀՀ 124-ամյակի տոնակատարությանը: Տոնակատարությանը ներկա էին Անգլիայում ՀՀ դեսպանատան ներկայացուցիչը, հոգեւոր առաջնորդը, 130 հրավիրյալներ:

Դավիթ Իշխանյանը հանդես է եկել «Արցախի ազատագրական պայքարը եւ ՀՀ Դաշնակցությունը» թեմայով զեկույցով: Չեկույցից հետո ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցչին հարցեր են ուղղել Արցախի ներկա քաղաքական, տնտեսական, ինչպես նաեւ սահմանում տիրող իրավիճակի մասին:

Դավիթ Իշխանյանն այցելել է նաեւ Լոնդոնի ՀՄԸՄ մասնաճյուղ:

Փետրվարի 23-ին ՀՀ Արցախի ԿԿ ներկայացուցիչը Միացյալ Թագավորության ՀՀ Գաղտնի հանձնախմբի անդամ Սեւան Արթինի ուղեկցությամբ հանդիպում է ունեցել Միացյալ Թագավորությունում ՀՀ դեսպան Արմեն Սարգսյանի հետ: Հանդիպման ընթացքում արծարծվել են Արցախի հիմնահարցի, Արցախի քաղաքական եւ տնտեսական իրավիճակի վերաբերող հարցեր:

Նույն օրը Միացյալ Թագավորության պառլամենտում տեղի է ունեցել ՀՀ ԿԿ ներկայացուցչի հանդիպումը պառլամենտի անդամներ Ջոն Ուայթինգթոնի եւ Սթիվեն Փաունդի հետ: Ջոն Ուայթինգթոնը հանդիսանում է Մշակույթի, լրատվության եւ սպորտի հանձնաժողովի, ինչպես նաեւ հայ-բրիտանական միջխորհրդարանական հանձնաժողովի նախագահը:

Դ. Իշխանյանը ներկայացրել է Արցախի ներկա քաղաքական եւ տնտեսական իրավիճակը, ՀՀ Արցախի կառույցի տեսակետները Արցախի հիմնախնդրի առնչությամբ, ինչպես նաեւ կարելու է Արցախի միջազգային ճանաչումը: Նկատի ունենալով Արցախի առաջիկա խորհրդարանական ընտրությունները՝ ՀՀ ներկայացուցչին առաջարկել է գրուցակիցներին դիտորդական կարգավիճակով մասնակցել ընտրական գործընթացին՝ մոտիկից ծանոթանալու Արցախի որդեգրած ժողովրդավարական ուղուն:

«ԱՊՍՈՍԺ»

Հայրենիքի հանդեպ կատարած պարտքը չպետք է առավելության վերածվի. Հրանտ Մարգարյան

Նախօրեին կայացավ Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանի հանդիպումը Հայաստանից Արցախ ժամանած ՀՀ ներկայացուցիչների, Արցախյան ազատամարտի մի խումբ վետերանների, ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների հետ:

Հանդիպման ժամանակ հանրապետության ղեկավարը կարելու էր նման այցելությունները՝ ընդգծելով, որ դրանք՝ որպես հայրենասիրության եւ համախմբվածության յուրատեսակ դրսևորում, դրականորեն են ազդում զինված ուժերի մարտունակության բարձրացման, ներհայկական կապերի ամրապնդման, մատաղ սերունդի հայեցի դաստիարակության վրա:

ՀՀ Բյուրոյի ներկայացուցիչը կարելու էր հետեւյալը.

«Անցած 25 տարվա ընթացքում միևնույն օրս մեր ընկերներով մենք հաճախ ենք Արցախում եղել: Եղել է հարյուրներով ենք եկել, եղել է՝ հազարներով: Անցած 25 տարիները ժամանակահատված էր, որն անցել է յուրաքանչյուրիս կենսագրությունից եւ շատ կարելու է, որ այս պայքարում մենք չհոգնենք, քանզի այդ 25 տարվա ընթացքում տոնում ենք մեր երկրորդ հանրապետության 23 ամյակը: Նշանակում է՝ մենք բախտավոր ենք, եւ այդ հաղթանակը չպետք է անգործության մատնի մեզ: Մենք պետք է հասկանանք, որ դեռ անելիքներ ունենք, այդ անելիքը մինչեւ վերջ պետք է կարողանանք իրագործել:

Մենք պետություն ենք ստեղծել, որպեսզի հայոց պատմության մեջ այլևս չունենանք այնպիսի մի էջ, որտեղ ցեղասպանության մասին խոսք լինի: Երկար ժամանակ պետականությունից զրկված ենք եղել, եւ այս պետականության ստեղծումը նշանակում է, որ այն մեր ամենօրյա «գուրգուրանքի» կարիքն ունի: Մենք պետություն ենք ստեղծել եւ այդ պետությունը պետք է լինի այնպիսին, որ կարողանա մեր ժողովրդի նկատմամբ հոգատարություն ունենալ, որ կարողանա մեր անվտանգության համար պատասխանատվություն կրել: Մենք պետություն ենք ստեղծել, որպեսզի կարողանանք մեր ժողովրդի զարգացումն ու բարօրությունն ապահովել: Այդպիսի պետություն ունենալու համար, սակայն, պետք է մասնակից լինենք նրա ստեղծմանը, մեր հերթին պետք է ներդրություն քաշենք, որպեսզի կարողանանք

այդ պետությունն ունենալ: Ուզենք, թե չուզենք՝ մեր պետականությունը պետք է լինի համահայկական, որովհետեւ այդ համահայկական ու համազգայինը չի սահմանափակվում Հայաստանի Հանրապետությանը եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը:

Վերջին ժամանակաշրջանում սահմանին տեղի ունեցած իրադարձությունները փաստում են պատերազմի առկայությունը: Ադրբեջանը, փաստորեն, փորձում է պատերազմի այս ձեւն այս անգամ պարտադրել մեզ: Սակայն այստեղ կա երկու հարց, որին անդրադառնալ եմ ուզում: Առաջինն այն է որ այդ մեր հայկական իրականությունը ՀՀ-ում եւ ԼՀՀ-



ում պետք է ընթացք ստանա, պետք է կազմակերպական ձեւ ստանա, ինչպես ստանում են պատերազմի մեջ եղող ժողովուրդներն ու երկրները: Մենք պետք է կարողանանք բոլորին հասկացնել, որ մենք պատերազմի մեջ գտնվող ժողովուրդ ենք, եւ այդ օրենքներով պետք է առաջնորդվենք: Այդ խստապահանջությունը, կարծում եմ, մեզ համար անհրաժեշտ է: Երկրորդ՝ այդ պատերազմը ձեռնտու է Ադրբեջանին: Բայց մենք պետք է ունենանք հակաբայլ, պետք է կարողանանք այդ պատերազմը տեղափոխել նաեւ այլ դաշտ, այնտեղ, որտեղ մենք կկարողանանք մեր առավելությունները պարտադրել հակառակորդին:

Մեր ուխտագնացությունը առկայությունն է այն բանի, որ մենք թիկունք ենք ռազմաճակատի զինվորին, զինվորը

պետք է զգա, որ իր թիկունքն ամուր է, պատասխանատու: Ես հավատացած եմ, որ եթե մենք ցանկանալիք, այս անգամ Արցախ այցելողների թիվը կդառնար 10 000, մարդիկ կգային ու կսեփեին, որ արցախցու կողքին են: Սա նաեւ մեր կոչվել է:

Ուրախ եմ, որ Հայաստանում զարգացած քաղաքական իրադարձությունները վերջին պահին կարողացան այլ ընթացք ստանալ, որովհետեւ քաղաքական վերնախավում ցուցաբերվեց պատասխանատվության գիտակցում: Այն, ինչ մենք կարողացանք շրջանցել՝ մեր քաղաքական կյանքի համար հաղթանակ է: Եւ այդ հաղթանակն առաջինը պետք է նոր

100-ամյակի շեմին պարտավոր ենք իբրեւ համախմբված ժողովուրդ աշխարհին ցույց տալ, որ ցեղասպանության հարցում վճռական ենք ու միակամ: Իսկ Ղարաբաղի հարցը երկրորդ կարմիր գիծն է, եւ ոչ ոքի չպետք է թույլ տանք խախտելու այն: Չանենք այնպիսի բան, որը կարող է մեր երկրում բերի այնպիսի վիճակի, որից կարողանա օգտվել հակառակորդը: Եթե արդար լինենք եւ խոստովանենք, ապա պետք է ասենք, որ մեր իրական հաղթանակներն ունեցել ենք այն ժամանակ, երբ Ադրբեջանում եղել է անկայուն վիճակ, երբ Ադրբեջանը ունեցել է քայքայված բանակ եւ ունեցել է ներքին սուր խնդիրներ: Մենք պետք է կարողանանք այս խոստովանությունն անել, որպեսզի այսօր կարողանանք դրանից խուսափել մեր երկրում: Միայն մենք կարող ենք պարտության վերածել մեր իսկ հաղթանակը, ինչից պետք է զգուշանանք:

Անցած 25 տարվա ընթացքում Դաշնակցության համար Ղարաբաղը եղել է գերխնդիր: Մենք ոչ մի անգամ չենք համարել, որ Ղարաբաղի պայքարը Ղարաբաղի մեջ ապրող ժողովրդի պայքարն է: Մենք համարել ենք, որ Ղարաբաղի պայքարը հայ ժողովրդի պայքարն է եւ այս առումով մենք նույնացվել ենք Ղարաբաղի հետ: Գաղափարական մարտիկը խաղաղ ժամանակ էլ է մարտիկ: Նա իրեն արտոնյալ վիճակի մեջ չի դնում: Ժողովրդի նկատմամբ ոչ ոք չպետք է արտոնյալ պայմանների ձգտի: Գաղափարական մարտիկի համար սա սկզբունքային հարց է: Հայրենիքի համար կատարած պարտքի կատարումը չպետք է առավելության վերածվի: Մենք այսօր էլ մեր երկրում պետք է լինենք ամենապարտաճանաչը, ամենահամեստը եւ ամենաբժախնորհը թերությունների եւ սխալների նկատմամբ: Ես ուզում եմ հավատալ, որ մեր ազգը ունենալու է նորա-նոր հաղթանակներ: Մեր սերունդը այս հանգրվանում պատմության առջեւ պարտք ունի կատարելու եւ իր պարտքը պետք է ավարտին հասցնի, հաջորդ սերունդների հիշողության մեջ մեր սերունդը պետք է մնա իբրեւ Արցախը անկախ հանրապետություն դարձրած սերունդ: Եւ այս պայքարը պետք է մինչեւ վերջ տանել, մինչեւ վերջնական հաղթանակ: Մեր նշանաբանը եղել է մնում է նույնը՝ Արցախը մեր գերխնդիրն է:

ԱՍԻ ԱՍՏՅԱՆ

Միացյալ Չայաստանի կերտումը, վաղը կտեսնենք. Ս. Շահվերդյան



Անցյալում՝ ֆիզմաթ ֆակուլտետի ուսանող, ապա՝ Արցախյան շարժումը եւ ազատամարտը լուսաբանող լրագրող, խմբագիր, ՀՀ անդամ, այժմ Արցախի Հանրապետության կառավարությանն առընթեր Զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության պետ: Հիրավի, սա Սերգեյ Շահվերդյանի մասնագիտությունների եւ զբաղմունքների միայն մի մասն է:

20-ամյա պատանի էր, երբ մասնակցում էր Արցախյան շարժման ընդհատակյա փուլին: Պատճառը, ինչպես նա է նշում, թերեւս, իր տատիկի անցած ուղին էր: Տատիկը դեռ 1960-ականների շարժման ակտիվիստ էր:

Ասում է՝ երբ դպրոցն ավարտեց, հայերեն 3 տառ գիտեր: Սակայն, մի՞գուցե հենց դա էլ պատճառներից մեկը դարձավ՝ ուսումնասիրելու իր մայրենին, պատմությունը, իր մեջ բազում հարցերի պատասխաններ ստանալու:

«Չնայած ռուսական կրթություն ունեւի՝ միշտ հետաքրքրվում էի հայոց պատմությամբ: Հիշում եմ, թե ինչպիսի մեծ դժվարությամբ կարողացա ձեռք բերել «Հայերի ցեղասպանությունը օսմանյան կայսրությունում» գիրքը: Այն ժամանակ դա արգելված գրականություն էր», - ասում է Ս. Շահվերդյանը:

Արցախյան շարժման ու պատերազմի տարիներին տեղեկատվության եւ դրա տարածման մեծ խնդիր կար, ընդհատակյա աշխատանքներ էր կատարվում գրությունների, հրապարակագրերի տարածման համար, որին նա իր ակտիվ մասնակցությունն է ունեցել:

Տարբեր աղբյուրներից կցկտուր տեղեկություններ էին ստանում: Այդ խմբում էին Բեկոր Աշոտը, Արկադի Կարապետյանը եւ այլ հայտնի դեմքեր: Իրենց կարողությունների չափով սկսեցին տեղեկատվություն տարածել: Արցախյան շարժման հրապարակային փուլը, փաստորեն, սկսվել է գաղտնի հրապարակագրերի գրությունների տարածմամբ:

Հիշում է՝ ինչ արագությամբ էր տարածվում Հ. Շիրազի «Ղարաբաղի ողբը» բանաստեղծությունը եւ այլոց՝ Ղարաբաղի մասին հոդվածները: Այս ամենն իրենց դրական ազդեցությունն են ունեցել Արցախյան շարժման ակտիվ փուլ անցնելուն:

Արցախյան շարժման ընդհատակյա

փուլին հաջորդեց հրապարակային փուլը: Այդ ժամանակ Սերգեյ Շահվերդյանը ֆիզմաթ ֆակուլտետի 4-րդ կուրսի ուսանող էր: Ինստիտուտի կոմերիտմիության քարտուղարն էր, ինչն էլ հնարավորություն էր տալիս ավելի ազատ գործելու: Ինչպես նա է նշում՝ ծանր ժամանակներ էին, համալսարանը երկու մասից էր բաղկացած. ուսանողության ուղիղ կեսը աղբյուրներից էր: Ցանկացած տեսակի գործունեություն վտանգավոր էր:

«Վախենում էիք. ոչ մեկս չգիտեիք, թե որտեղ կհայտնվեք: Խորհրդային Միությունը մի հրեշ էր, որի ուժի եւ կարողությունների մասին մենք տեղյակ էինք: Այնուամենայնիվ, դա հոգու պոռթկում էր եւ արվեց: Փետրվարի 13-ին ցույցի դուրս եկավ ուսանողությունը, որին հաջորդեցին մաքսած ցույցերը»:

Կոմերիտմիության պաշտոնը հնարավորություն ընձեռեց նրան՝ շատ ավելի ակտիվ, գրեթե բացահայտ մասնակցել Բերդաձորի պաշտպանությանը: «Շինարարական ջոկատ» անվան տակ նրանք, ռուս զինվորների ուղեկցությամբ, գնում էին Բերդաձոր, ցերեկները իրականացնում շինարարական աշխատանքներ, գիշերներն էլ պահպանություն անում՝ մինչեւ Բերդաձորի

ցիչ է ընտրվում:

«Դժվար, պատասխանատու պահ էր, չէի ցանկանա այդ դժվարությունները որեւէ մեկն ապրեր: Սակայն, Կենտրոնական կոմիտեի ուժեղ կազմ էր հավաքվել՝ ի դեմս Սերուժան Մոսիյանի, Վիգեն Գրիգորյանի, Կամո Մարտիրոսյանի, Դավիթ Իշխանյանի», - ասում է Սերգեյ Շահվերդյանը:

Կուսակցությունը շատ ծանր կացության մեջ հայտնվեց, երբ իրար հետեւից գոհվեցին կուսակցության լավագույն տղերքը՝ Արմենյուն, Արմեն Մելքունյանը, Սերուժան Մոսիյանը, Վիգեն Գրիգորյանը եւ շատ ուրիշները:

«Անկախ բոլոր դժվարություններից՝ շարունակում էինք աշխատել, քանի որ կարելու առաջադրանքներ ունեինք կատարելու: Դրսի հետ կապեր էինք պահում՝ ապահովելու ռազմական անհրաժեշտություն ունեցող բեռների առաքումը, որը կատարվում էր շատ հաճախ դրսի, հատկապես՝ ԱՄՆ կառույցի կողմից»:

Այդ ամենի հետ մեկտեղ լրագրությանը էր զբաղվում՝ Արցախի մասին լուրեր տրամադրելով եւ թղթակցելով միջազգային ու հայկական մամուլին:

Լրագրությամբ զբաղվել է նախքան պատերազմի տարիները՝ 1984-ից սկսած՝ կապեր հաստատելով «Հայրենիքի ձայն» թերթի հետ, որտեղ հրապարակվում էին նրա՝ Ղարաբաղի մասին հոդվածները (այն միակ թերթն էր, որ հրա-



բռնագրավումը: Վիճակը հետո սաստկացավ:

Խոստովանում է, որ ի տարբերություն համախոհների՝ Բեկորի, Արկադի Կարապետյանի, ավելի ուշ սկսեց մտածել, որ միայն զենքով պիտի հաղթանակի հասնեն, սակայն ի վերջո հասկացավ, որ դա անխուսափելի է:

Արցախյան շարժման ամենաեռանդուն ժամանակաշրջանում՝ 1989-ին, անդամակցեց ՀՀ ԶՊՊ-ին:

Ինչպես նա է նշում՝ իր այդ որոշման վրա մեծ ազդեցություն ունեցավ ցեղակրոն շարժման ներկայացուցիչ Հակոբ Խաչատրյանը: «Նրա մասին, դժբախտաբար, մոռացել ենք բոլորս, հանրային բեմերից չի խոսվում, սակայն իր ներդրումը շատ մեծ էր», - ասաց նա:

1992-1993թթ. նա ՀՀ Արցախի Կենտրոնական կոմիտեի ներկայացու-

տարակվում էր Սփյուռքի համար):

1990-ականների սկզբին, երբ Երեւանում ստեղծվեց ՀՀ մամուլի տեղեկատու կենտրոնը, մեկ ամիս անց նա նշանակվեց այդ կենտրոնի Ստեփանակերտի գրասենյակի տնօրեն: Պատերազմի տարիներին միջինը 10 լուր էին հաղորդում Երեւան, որտեղից էլ սփռվում էր ամբողջ աշխարհով մեկ:

Հատկանշական է, որ Մայիսի 9-ի՝ Շուշիի ազատագրման մասին առաջին հոդվածի հեղինակը հենց Սերգեյ Շահվերդյանն էր: Հոդվածը առաջինը հրատարակվեց «Երկիր» թերթում:

«Դժվարին պայմաններում էինք աշխատում, գաղտնի սփռում էինք Արցախի մասին լուրերը: Սովետական իշխանությունը գրավել էր լրատվական դաշտը, փակել էին Արցախի ռադիոն եւ հեռուստատեսությունը, սակայն մենք

հրապարակում էինք Արցախի շաբաթվա լուրերը տարբեր շրջաններից: Մեր տղաները՝ Սերուժան Մոսիյանը, Դավիթ Իշխանյանը եւ այլոք, բացի մարտի դաշտում կռվելուց, նաեւ ամեն մեկն իր շրջանի լուրերն էր հաղորդում», - ասաց Սերգեյ Շահվերդյանը:

Պատերազմից հետո Սերգեյ Շահվերդյանը ղեկավարել է ՀՀ Արցախի պաշտոնաթերթը՝ բազմիցս մատնանշելով իշխանության բացթողումներն ու անելիքները:

Գտնում է, որ ազատ մամուլը շատ մեծ նշանակություն ունի երկրի զարգացման համար, եւ այսօր, կառավարության մաս կազմելով, անձնապես գտնում է, որ մեր երկրին անհրաժեշտ է ավելի ազատ մամուլ եւ ավելի ազատ քննարկումների միջոցով հասարակական կարծիքի ձեւավորում, որովհետեւ ոչ մի կառավարություն երաշխավորված չէ սխալներից, իսկ սխալներից խուսափելու միակ ձեւը հասարակության մասնակցությունն է որոշումների կայացման գործընթացին: Սա այն է, ինչի առումով, իր կարծիքով, թերանում ենք:

Անդրադառնալով Արցախյան շարժման ժամանակ ինչպե՞ս միացման կոչերին, պահանջներին, իսկ հետագայում բազմիցս ինչպե՞ս է ԼՂՀ-ի եւ ՀՀ-ի միջեւ հնարավոր ջրբաժանին, նա նշեց, որ այդ չակերտայլ ջրբաժանը արհեստականորեն առաջացրել են 1990-ականներին՝ ՀՀ իշխանությունների հովանավորությամբ եւ Հայաստանի իշխանության դարաբաղյան ռազմական հատվածի անմիջական ջանքերով: Պետք էր ավելի քան 10 տարի, որպեսզի վերացվեն դարաբաղի-հայաստանցի հակասությունները:

«Կարծես թե մինչեւ վերջերս այդ հակասությունները գրեթե չկային: Որոշ իրադարձությունների հետեւանքով, որոշ ուժերի կողմից փորձվեց այն նորից մտցնել ժողովրդի մեջ, սակայն, կարծում եմ, որ հայ հասարակությունը շատ լավ գիտակցում է դրա վտանգավորությունը:

Անհնար է կիսել հայ ժողովուրդը մասսաների. դա տեխնիկապես անհնար է: Մենք Հայաստանի մի մասն ենք: Արցախը Հայաստան է, բայց դեռ ՀՀ չէ: Վաղը, վստահ եմ, կդառնա Հայաստանի Հանրապետություն, որի տարածքը կլինի ոչ թե 40 հազ քառ կմ, այլ՝ 140 հազ քառ կմ, մյուս օրը՝ շատ ավելի մեծ: Այսօր, այդ մասին խոսելիս, շատերը թերահավատորեն են վերաբերում, սակայն մեր ծնողները եւ թերահավատորեն էին վերաբերում Ղարաբաղի ազատագրմանը, Հայաստանի անկախացմանը: Այն, ինչ մեր ծնողներն անհնար էին համարում, հնարավոր դարձավ: Հիմա էլ նույնն է: Միացյալ Հայաստանի կերտումը, վաղը կտեսնենք:

Ցավոք, մենք Աղբյուրներից հետո պատերազմից հետո բազում չլուծված խնդիրներ թողեցինք մեր սերունդներին: Մեր փաստացի սահմանները չհասցրինք մեր պատմական սահմաններին, եւ դա մեծ մեղք է մեր հոգու վրա: Պետք է մեր երեխաներին հանձնեցինք գոնե հյուսիսային ամբողջական սահմանով Հայաստանը», - նշեց նա:

Յերոսի թիկունքը հերոս կինն է



Կան մարդիկ, ովքեր իրենց ապրած կյանքով սրբագործում են իրենց կենսագրությունները՝ այն թողնելով սերունդներին՝ որպես անջնջելի պատմություն, որպես հպարտություն: Այդ մարդիկ ապրում են սովորական կյանքով: Նրանց ամենամեծ հատկանիշը, սակայն, նվիրումն է, որով առանձնանում են շրջապատից: Այդ նվիրումը հերոսացնում է նրանց և նրանց անցած ճանապարհը... Սմբատ Թաթոսյանն այդ եզակիներից էր...

Երեւանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետի ուսանողից և պիտի զինվոր ու հրամանատար դառնար, գրիչը փոխարինելով գեղարվեստի թիկունքը...

Սմբատը 1992-ին մասնակցեց Խոջալուի գործողությանը, Շուշիի, Ասկերանի, Յաղաթի, Լաչինի ազատագրմանը: Գետաշեն-Մարտունաշեն ռազմական խորհրդի անդամ էր, զենք-զինամթերքի պատասխանատուն Գետաշենում, Շուշիի առանձնակի գումարտակի առաջին վաշտի գործադիր ղեկավարը...

Թվում էր՝ այսքան երկար ճանապարհից հետո ևս պիտի վայելեր հաղթանակի բերկրանքն ու ապրել այն հողի վրա, որտեղ կերտել է իր փառավոր մարտական ուղին:

Սվետլանա Ազիյանը, ով պատերազմի տարիներին եղել է Զեյթունյան Քոչի թարգմանչուհին, ևս շատ մոտիկից ճանաչել է Սմբատին ու նրա զինակից ընկերներին, պատմում է.

«Սմբատը քաջասիրտ էր, համեստ, չէր սիրում մի բանը մի քանի անգամ կրկնել: Ես պատկառելի կերպար էր, բոլորը սիրում էին նրան: Սմբատի հետ առաջին անգամ ծանոթացա 1992-ի ապրիլին: Իր ընկերոջ՝ Արշավիրի հետ Յայաստանից նյութական օգնություն էին բերել Ստեփանակերտ: Ինձ ճանաչելով ու վստահելով՝ հանձնարարեցին բաժանել կարիքավոր ընտանիքներին: Հրապարակեցի տուն. ռազմականության տարափի ձայների տակ երկար գրուցեցինք տղաների հետ: Նրանք ՅՅ Դաշ-



են գեղարվեստի կերտել կենսագրության կարեւորագույն էջերը:

Երբ հնչեց պատերազմի կոչնակը, Սմբատն առաջիններից էր, ով միացավ հող հայրենի պաշտպանությանը: Կազմակերպեց Արարատի մարզի կամավորական ջոկատները, դարձավ զինվորների ոգին, առաջնորդեց տասնյակ մարտերի, նրանց հետ անցավ դժվարություններով ու հաղթանակներով լի ուղի: Չինակիցների հետ մարտնչեց Երասխավանի պաշտպանական մարտերում, 1990 թվականից մասնակցեց Շահումյանի և Բուզլուխի կռիվներին:

Թաթուլ Կրպեյանի զոհվելուց հետո, ում հետ շատ մտերիմ էր, Սմբատը դար-

ձակցության զինվորներ էին, եկել էին կռվելու հանուն Արցախի: Սմբատը կատակասեր էր, բայց ևս զուսպ, ժպիտով էր խոսում: Ասում էր, որ հավանում է Դաշնակցության գաղափարախոսությունը, Ծրագիրը: Ասում էր, որ հավատում է Միացյալ Յայաստանի ստեղծմանը:

Տղաները հարցնում էին, թե ոնց են Ստեփանակերտի բնակիչները դիմանում պատերազմական վատթար պայմաններին, հարցնում էին նկուղներում ծվարած երեխաների վախի ու սարսափի մասին: Ամեն ինչից անհանգստացած էին: Նրանք հնարավորինս օգնություն էին հայթայթում նկուղների մակուկների ու ծերերի համար՝ ուտելիք, գուլպաներ, մոմ, լուցկի

եւ այլն: Բերում էին, բաժանում: Նրանց աչքերում տխրություն էի տեսնում, խոր տխրություն, բայց ևս երբեք հավատ կար նրանց աչքերում: Նրանք հավատում էին գալիք հաղթանակին: Ես հպարտություն էի զգում, որ ճանաչում եմ Սմբատին ու նրա ընկերներին: Նրանց հայրենասիրությունը սահմաններ չուներ: Այդ օրերին նրանք արդեն նախապատրաստվում էին Շուշիի գործողությանը, շտապում էին:

Երեւանի պետական համալսարանում սովորելու տարիներին Սմբատը ծանոթացավ ապագա կնոջ՝ Մարինեի հետ: Նույն կուրսում էին սովորում: Այնքան նման էին իրար, որ շատերը հարցնում էին՝ ըույր ու եղբայր ե՞ք: Ամուսնացան, 1984-ին ծնվեց նրանց առաջնեկը՝ Նելլին:

Մարինեն ամեն հարցում ամուսնու կողքին էր, թե ու թիկունք էր նրան: 1987-ից զբաղվում էր մանկավարժական գործունեությամբ: 1988-ին Մարինեն անդամագրվեց Հայ օգնության միությանը: Միության աշխատանքներին միասնալով՝ նպատակ ուներ իր ներդրումն ունենալ հայրենիքի օգնության, հայրենակիցներին օժանդակության մարդասիրական ծրագրերին:

«Պատերազմի ավարտից հետո մենք ընտանիքով տեղափոխվեցինք Զաշաթաղի շրջանի Զարեգահ համայնք, պատմում է դուստրը՝ Նելլին, - հայրս դարձավ համայնքի ղեկավարը, ծնողներս շարունակեցին իրենց մանկավարժական գործունեությունը: Զաշաթաղ տեղափոխվելու հայրիկի որոշմանը հարազատները դեմ էին: Ասում էին՝ ի՞նչ կա այնտեղ, մարդ չկա համարյա. ինչու՞ հենց այնտեղ: Հայրս պատասխանում էր՝ իսկ ո՞վ պիտի շենացի մեր ձեռքով ազատագրած տարածքները, եթե ոչ՝ մենք ինքներս:

Իմ ծնողներն ինձ համար օրինակելի կերպարներ են: Նրանք միասին ուժ էին, կարողանում էին հաղթահարել ամեն մի խոչընդոտ, չէր թաքցնում մի բան ստեղծել, իրենց օրինակով ոգեւորել ինձ ու երկու եղբայրներին: Ես հորս աչ ձեռքն էի, ասում էր՝ դու իմ մեծ տղան ես, պիտի իմ գործը շարունակես: Ես ժպտում էի՝ շատ հաճախ չհասկանալով նրա խոսքերի իմաստը: Հիշում եմ երբ, եկանք Զարեգահ, ոչ ճանապարհ կար, ոչ էլ՝ կարգին շինություններ. գյուղի դպրոցն էլ չէինք գտնում: Հայրս բարձրացավ մի բարձր տեղ ևս նայեց շուրջընդոտ, որպեսզի դպրոցանման մի շենք գտնի: Ես այդ ժամանակ 5-րդ դասարանում էի սովորում: Դպրոցում 5-րդ դասարան չկար, աշակերտ չկար: Երբ ես դպրոց գնացի, 5-րդ դասարան բացվեց, մենակ էի սովորում դասարանում»:

Նելլին հպարտությամբ է հիշում հորը, հպարտությամբ շեշտում, որ տեսքով ու բնավորությամբ շատ նման է հայրիկին: «4-5 տարեկան աղջնակ էի, բայց այսօրվա պես հիշում եմ այն պատկերը, թե ինչպես էին առնական ու խրոխտ զինվորները յարիսուշտա պարում մեր տանը: Աչքերիս առաջ նրանց հայդուկային կերպարանքներն են, ականջներումս՝ նրանց պարն ու ոտքերի ուժեղ հարվածները», - պատմում է:


Արդեն ազատագրված հող հայրենիքում Սմբատը պիտի շարունակեր մանկավարժի և ազատագրված տարածքը շենացնելու իր ընտրած ուղին, սակայն նրա նվիր-

ական կյանքն ընդհատվեց ողբերգական ավտովթարի պատճառով:

Սմբատ Թաթոսյանը հետմահու արժանացել է «Արիության», «Շուշիի ազատագրման համար» և «Երախտագիտության» մեդալների:

Անդամակալ կորուստն անզոր եղավ կուրբելու կնոջը: Մարինեն պատվով շարունակեց հերոս ամուսնու կիսատ թողած գործը: Ոչ միայն մենակ տարավ ընտանիքի ամբողջ բեռը, մեծացրեց երեք զավակներին, այլև շարունակեց այն դրվատանքի արժանի գործը, որ սկսել էր ամուսինը:

2001 թվականին Մարինեն դարձավ Զարեգահ համայնքի ղեկավարը՝ փորձելով կիրառել ամուսնուց ձեռք բերած ղեկավարի փորձը, իրականացնել նրա կիսատ աշխատանքներն ու ծրագրերը: Մինչ այսօր Մարինեն ղեկավարում է գյուղի համայնքը: Նրա աշխատասիրության շնորհիվ համայնքն այսօր համագործակցում է մի շարք բարեգործական հիմնադ-



րամների հետ, ինչպիսիք են «Հայրենիք» միությունը, «Մուխեթ Մեյքոնյան», «Բարի նպատակ», «Թուֆենկյան» և այլն:

Զարեգահ համայնքն իր զարգացման օգնության աստիճանով համարվում է Զաշաթաղի շրջանի լավագույն համայնքներից մեկը: Շրջանի տնտեսության, մշակույթի, սոցիալական ոլորտի վերականգնման ու զարգացման գործում ծանրակշիռ ավանդի համար Մարինե Պետոյանը բազմիցս արժանացել է պատվոգրերի: 2005 թվականին ԼՂՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:

Մարինեն ևս շարունակել է ամուսնու գաղափարական ճանապարհը. ևս այսօր ՅՅԴ անդամ է:

Ասում են՝ ամուսնու պատիվը պահողն ու բարձրացնողը կինն է: Այս առումով Մարինեն արժանի է ակնածանքի, քանզի ոչ միայն ողջ կյանքում սատար է եղել ամուսնուն, այլև այսօր պատվով շարունակում է քայլել ամուսնու որդեգրած ճանապարհով՝ ինքն էլ իր բաժին ներդրումն ունենալով հայրենիքի շենացման ու զարգացման պատասխանատու գործում:

Երիտասարդ զույգը ցանկանում է, որ իրենց քայլը վարակիչ լինի



Գրեթե երկու տարի առաջ սոցցանցերում բավականին մեծ արձագանք գտավ երիտասարդ մի զույգի ամուսնության պատմությունը: Այդ զույգը հանրության ուշադրության կենտրոնում հայտնվեց, քանզի ամուսնանալուց անմիջապես հետո նրանք պատրաստվում էին մշտական բնակություն հաստատել Արցախի գոյություն ունեցող վայրերից մեկում՝ Զարվաճառում:

Մասնագիտությամբ լրագրող Թամարա Գրիգորյանը, ով ծնունդով Վանաձորից է և պատմաբան Դավիթ Եղիազարյանը, ով Երեւանից է, ինչպես իրենք են պատմում, պատահական հանդիպել են Երեւանում կազմակերպված՝ Արթուրյանի կեղծ քարոզչական թեմայի մասին դասընթացների ժամանակ:

«Համալսարանում ուսանելու առաջին իսկ տարիներից, մասնագիտության բերումով, պարբերաբար առնչվել եմ Արցախի հիմնախնդրին, Արցախի ազատագրված տարածքների թեմային: Երրորդ կուրսում էի սովորում, երբ մի քանի դասախոսություն լսեցի Արցախի ազատագրված տարածքների ռազմավարական կարեւորության եւ այն մասին, թե որքան թերբնակեցված են այդ տարածքները: Հենց այդ ժամանակ ինձ մտո միտք հղացավ ապրել Արցախի ազատագրված որևէ տարածքում:

Ինձ անչափ դուր եկան Զարվաճառի մասին պատմող լուսանկարները: Այդ լուսանկարներն ինձ մտո վերածննդի, նոր էջից ինչ-որ բան ստեղծելու զգացողություններ արթնացրին: Ու հենց այդ ժամանակ ես հասկացա, որ այնտեղ անելիքները շատ են, այնտեղ իմ կարիքը կա: Բնականաբար, այդ ժամանակ դա ընդամենը երազանք էր:

Հետո, երբ սկսեցի Դավիթի հետ ընկերություն անել, պարզվեց, որ Դավիթն էլ նման երազանք ունի, եւ չէր պատկերացնում, որ այն կարող է մի օր իրականություն դառնալ: Դավիթը պատմաբան է եւ ինձանից լավ է հասկանում վերաբնակեցման անհրաժեշտությունը: Մի օր՝ 2011-ին, երբ մենք հյուր եկանք Զարվաճառ ու այցելեցինք Զանանյան Ալեքսանդրի տուն, հենց այդ ժամանակ հստակ որոշեցինք, որ պետք է ապրենք Զարվաճառում»:

Թամարայի խոսքերով՝ քանի որ վերջին տարիներին Զարվաճառում վերաբնակեցման ծրագիր չկա եւ նոր տներ չեն կառուցվում, բնականաբար՝ զույգը սկսում է մտածել սեփական միջոցներով տուն կառուցելու մասին. «Երբ 2012 թվա-

կանին նորից Դավիթի հետ այցելեցինք Զարվաճառ, պարզվեց, որ Զարվաճառի դպրոցում պատմության ուսուցչի կարիք կա, եւ Դավիթը որոշեց աշխատանքի ընդունվել դպրոցում: Դպրոցում Դավիթի աշխատանքի ընդունվելու հանգամանքն ասես Աստծո կամոք էր, եւ մենք որոշեցինք չհետաձգել մեր տեղափոխվելը»:

Պսակադրությունից 3 օր հետո զույգը տեղափոխվում է Զարվաճառ՝ մշտական բնակության. «Սկզբում ապրում էինք Ալեքսի տանը, որից հետո մեզ համար ընտրեցինք մի ավերակ եւ սկսեցինք կառուցել մեր տունը. շերմ ժպիտով պատմում է Թամարան. «մեր տան կառուցման համար որոշ անհատների կողմից եղել են օժանդակություններ, ինչը բավական չէր ամբողջ տունը կառուցելու համար: Մենք մեր գումարներն ենք ներդրել եւ հիմա էլ շարունակում ենք ներդրել, որովհետեւ մեր տան շինարարությունն ավարտին հասցնելու համար դեռ բավականին գործեր կան: Այսօր տանիք ունենք, պատերը կան, մնում է ներքին հարդարման գործերը, եւ այդքանը բավական է, որ մենք մեր կյանքը սկսենք մեր նորակառույց տանը»:

Թամարայի եւ Դավիթի ծնողները հենց սկզբում լուրջ չեն վերաբերել՝ տեղեկանալով, որ իրենց զավակները Զարվաճառ տեղափոխվելու ցանկություն ունեն. «Իմ եւ Դավիթի ծնողները շատ վատ ընդունեցին մեր՝ Արցախի տեղափոխվելու որոշումը. հիշելով արդեն անցյալում մնացած օրերը՝ պատմում է Թամարան. «սկզբում չէին հավատում, հույս ունեին, որ չենք գա, հետո հույս ունեին, որ չենք դիմանա: Չեմ կարող ասել, թե մինչեւ հիմա հաշտվել են մեր որոշման հետ, բայց հիմա նրանց վերաբերմունքը մի քիչ ավելի մեղմ է»:

Մեր ծնողները չէին պատկերացնում, թե մենք ուր ենք գնում: Նրանց ամենից շատ այդ անորոշությունն էր անհանգստացնում: Այսօր Հայաստանում շատ քչերը գիտեն Զարվաճառի մասին: Դա նրանց համար մի անորոշ աշխարհ է: Ես կարծում եմ, որ եթե մեր ծնողները հասկանային այս տարածքների կարեւորությունը, երեւի նման ռեակցիա չէին ունենա: Իսկ հետո ավելի հանգստացան: Մորս գերել է Զարվաճառի բնությունը: Նա խոստացել է այս գարնանը գալ եւ օգնել մեզ հող մշակելու գործերում»:

Թամարա Գրիգորյանը մինչ Զարվաճառ տեղափոխվելն աշխատում էր Times.am լրատվական կայքում, իսկ

Զարվաճառ տեղափոխվելուց հետո նույն լրատվական կայքում նյութեր է հրատարակում Զարվաճառի մասին: Միաժամանակ թղթակցում է «Նոր Շահումյան» թերթին եւ Արցախի հանրային ռադիոյին: Սակայն իր հիմնական աշխատանքն է համարում Զարվաճառի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնում աշխատանքը, որտեղ երեխաներին ուսուցանում է անգլերեն:

«Զարվաճառ տեղափոխվելով՝ շատ բան փոխվեց իմ կյանքում: Զարվաճառում կյանքի տեմպը շատ դանդաղ է: Ես չեմ կարող համեմատել Զարվաճառն ու Երեւանը. դրանք կարծես տարբեր աշխարհներ լինեն: Զարվաճառում ես շատ բան սովորեցի: Առաջինը սովորեցի համբերել, սովորեցի ինքնուրույն շատ բաներ անել: Այստեղ կարող է խառնվել մի օր փակ լինի, եւ դու ստիպված պետք է հաց թխես»:

Սովորեցի փայտ կտրել եւ նման շատ բաներ: Ավամայից սովորեցի ցանկացած իրավիճակում կարողանալ ինքնուրույն դուրս գալ, ինչը շատ կարեւոր է: Ինձ դուր է գալիս, որ առանց զգուշացնելու կարող եմ քո տուն հյուրեր գալ. Երեւանում նման բան չէր լինում: Այստեղ մարդիկ իրար հետ կապված են, եւ բոլորը



հնարավորինս իրար օգնում են: Հիմա ավելի շատ շփվում եմ երեխաների հետ: Ես նրանց եմ շատ սիրում, նրանք էլ՝ ինձ: Ես ինձ Զարվաճառում օտար չեմ զգում: Զարվաճառն իմն եմ համարում, Զարվաճառի հոգսերն էլ են իմը»:

Իսկ բոլոր այն երիտասարդ զույգերին, ովքեր ցանկանում են գալ եւ բնակություն հաստատել Արցախում, Թամարան խորհուրդ է տալիս անապայման գնան Զարվաճառ, որովհետեւ Զարվաճառում իրենց կարիքը կա: «Այն երիտասարդ զույգերը, ովքեր ցանկանում են բնակություն հաստատել Զարվաճառում, խորհուրդ եմ տալիս, որ լավ գիտակցեն, թե ո՞ր են գնում եւ ինչու»:

Եթե մինչ իրենց այստեղ գալն իրենք լավ չեն կշռադատել իրենց այդ որոշումը, ապա նրանք այստեղ պարզապես չեն դիմանա: Երբ կա գիտակցում, ցանկացած դժվարություն շատ հեշտ է թվում: Ամենակարեւորը՝ շատ լավ գիտակցեն, հաշվարկեն ու նոր գան»:

Թամարայի խոսքերով՝ երբեմն լինում են հուսահատության պահեր. «Եթե երբեք ունեցել եմ հուսահատության պա-

հեր, ինչը յուրաքանչյուրի հետ լինում է, երեխաների հետ շփվելուց, նրանց հետ պարապմունք անցկացնելուց հետո ամեն ինչ իր տեղն է ընկել. պատմում է Թամարան եւ մեծ ոգեւորությամբ նշում, որ իրենց ընկերներից շատերն են ոգեւորվել Զարվաճառ տեղափոխվելու հանգամանքով եւ ցանկություն են հայտնել նույնպես տեղափոխվել Զարվաճառ:

- Երբ մենք դեռ նոր էինք տեղափոխվել, ընկերուհիներիցս մեկն էլ եկավ ու մեկ տարի Մանաշի դպրոցում անգլերեն դասավանդեց: Հետո վերադարձավ Երեւան, ստացավ ավարտական վկայական ու, քանի որ նրա սիրտը Զարվաճառում էր, վերադարձավ եւ Դադիվանք գյուղի դպրոցում 1 տարի անգլերեն դասավանդեց: Ճիշտ է՝ հիմա նա Երեւանում է, բայց, կարծում եմ, կվերադառնա ու կմնա Զարվաճառում»:

Մեր ամբողջ զրույցի ընթացքում Դավիթը համեստորեն լռում էր: Նա միայն նշեց, որ Զարվաճառ պետք է գան խելացի ու բանիմաց մարդիկ, քանզի ազատագրված հայրենիքին նման մարդիկ են պետք: Ի դեպ, բացի այն, որ Դավիթը դպրոցում դասավանդում է պատմություն, նա նաեւ Զարվաճառի բնակիչներին օգնում է եւ վերանորոգում նրանց

համակարգիչները: Դավիթի եւ Թամարայի տունն այնքան շերմ էր, որ անգամ անսվաղ պատերն աչք չէին զարնում: Չույզը շատ ծրագրեր ունի, ոչնչից չեն դժգոհում: Իրենց հաշվարկներով՝ սեփական աշխատավարձը հավաքելով՝ մի քանի տարիների ընթացքում ծրագրում են տան պատերը սվաղել: Գրեթե երկու տարի տունը հատակ չունի, բայց ամենակարեւորը Դավիթի եւ Թամարի շնորհիվ Զարվաճառի ավերակներից մեկը վերականգնվել է:

Դավիթի եւ Թամարի հետ զրուցելու ամեն մի պահի ինձ համար մի նոր բացահայտում էի անում: Եվ հերթական գարմանքս եղավ այն, որ երիտասարդ զույգի ներկայիս երազանքը ոչ թե շուտափույթ միջոցներ հայթայթելն ու իրենց սեփական տան վերանորոգումն է, այլ՝ գտնել մասնագետներ եւ միջոցներ, որպեսզի Զարվաճառում զբոսայգի կառուցվի:

«Մենք մեր ապագան Զարվաճառում ենք տեսնում, եւ ուզում ենք՝ մեր քայլը վարակիչ լինի», -սա էր երիտասարդ զույգի խոսքը, որը նաեւ պատգամ է:

Նա զոհվեց այն օրը, երբ որդին լույս աշխարհ եկավ

Արծրունին բոլորի պես երազանքներ ուներ. ցանկանում էր որդի ունենալ, ցանկանում էր, որ պատերազմն ավարտվի ու իր որդին ապրի ազատագրված Արցախում: Նրա երազանքները մասամբ պիտի իրագործվեին: 5 տարվա սպասումից հետո պիտի ծնվեր Մերուժան որդին, պատերազմը պիտի հաղթանակ ծներ, սակայն ինքը կոչված չէր այդ ամենը տեսնելու, քանզի ինքնաշեն նռնակի պայթյունը խլելու էր մատաղ կյանքը, իսկ այդ նույն օրը, գուցե եւ նույն ժամին, կինը՝ Չարինեն, Ստեփանակերտի ծննդատանը պիտի որդի ծներ:

Արծրունին չհասցրեց ճաշակել հայր դառնալու ուրախությունը: Մահ եւ ծնունդ, կորուստի ցավ եւ վիրավոր ուրախություն... Անավարտ երազանք... Պատերազմի դաժան օրերը... Մանկան առաջին ճիչ, որ նաեւ բողբոջ էր...

Տարիներ են անցել, բայց ամեն տարվա ապրիլի 13-ին Շինդյանների տանը ուրախությունն ու տխրությունն անբաժան են: Սկզբում բարձրացվում է Արծրունու անմահության կենացը, ապա՝ որդու՝ Մերուժանի ծննդյան բարեմաղթանքը: Ամեն տարի այդ օրը Չարինեի աչքերում սառնում է արտասուքը: Երբ նայում է պատից կախած ամուսնու լուսանկարին, սիրտը լացում է: Երբ նայում է որդու սլացիկ հասակին, զսպում է լացը եւ փորձում տուրջ չտալ տխրությանը:

Այս տարիները Չարինեի համար պայքարի տարիներ էին: Նա փորձեց ցամաք աչքերով մեծացնել որդուն, որպեսզի որդին չընկճվի մոր վշտից, լուռ ու անխոստ տարավ իր բաժին ցավը եւ սրտի ողջ սերը նվիրեց միևնույն արժանիքին...

Արծրունի Շինդյանի ծննդավայրն Աշան գյուղն է: Գյուղում մեծացել եւ կրթություն է առել: 1979-ին տեղափոխվել է Աշխաբադ, սովորել տեղի պրոֆտեխնոստումսարանում: Միաժամանակ նաեւ վարսավիրի

դասընթացների էր հաճախում: Խորհրդային բանակի շարքերում ծառայությունն ավարտելուց հետո նորից վերադարձել է Աշխաբադ, աշխատանքի ընդունվել քաղաքի վարսավիրանոցներից մեկում:

1987 թվականի սեպտեմբերին Արծրունին վերդառնում է հայրենի գյուղ: Նույն ամսում Ստեփանակերտի մարզային հիվանդանոցում ծանոթանում է ապագա



կնոջ՝ Չարինեի հետ, ով հիվանդանոցում բուժքույր էր աշխատում: Մեկ ամիս անց նրանք ամուսնանում են:

Մինչ Արցախյան պատերազմի սկսվելը Արծրունին ու Չարինեն ապրում էին Աշխաբադում: 5 տարի էր, ինչ ամուսնացել էին, բայց զավակ չունեին: Եվ ահա մի օր Չարինեն հայրանալու երջանիկ լուրը ավետեց ամուսնուն: Այդ տարիներին Արցախում արդեն սկսվել էին քաղաքական խմորումները, ժողովուրդը ոտքի էր կանգնել, պայքարի կոչեր էին հնչում, պատե-

րագմն անխուսափելի բնույթ էր ստանում: Ծննդավայրից եկող լուրերը անտարբեր չէին կարող թողնել Արծրունուն:

Կնոջ հետ շտապեց Արցախ, հայրենի Աշան գյուղ, որտեղ ապրում էին ծնողներն ու հարազատները: Չինվորագրվեց հայրենիքի պաշտպանությանը: Գյուղում կամավորական ջոկատ էր ձևավորվել Արմեն Ավագյանի գլխավորությամբ: Արծրունին միացավ նրանց: Չարինեն ապամուսն

կմանք գյուղում, տուն կկառուցենք: Ուզում եմ, որ գավակներս այստեղ ապրեն...»:

Չարինեն հիշում է, որ հայտնի Կուրցո օպերացիայի ժամանակ շատերի հետ ձերբակալվեց նաեւ ամուսինը, տարան Շաղբուլաղի բանտ: Մեկ ամիս անց մի կերպ հնար գտան ազատելու: «Նրան վիճակված չէր տեսնել իր երագած հաղթանակը, բայց նա էլ մի մասնիկն է այդ հաղթանակի, որին հասանք մեր ազգային միասնությամբ: Հիմա մեզ ամենից շատ այդ հաղթանակը պահել-պահպանել է պետք. մեր ազգային միասնությունը չպետք է խաթարվի...», -ասում է Չարինեն:

Արծրունի Շինդյանը զոհվել է 1992 թվականի ապրիլի 13-ին: Նա Աշան գյուղի առաջին զոհն էր: Ապրել է ընդամենը 28 օրում, թողել անավարտ մի երագանք եւ մի պայծառ անուն...

«Որդիս մի օր ասաց՝ մամ, հարսնացու ունեմ: Ուրախացա, հարցրի՝ ո՞վ է, ասաց՝ անունը Ռոզա է, նա էլ հայր չունի, զոհվել է պատերազմում: Սիրտս մղկտաց, զսպեցի արցունքս ու ասացի՝ իրար թիկունք կլինեք, տղաս, դուք իրար սիրտ լավ կհասկանաք...», - պատմում է եւ ուրախությամբ նշում, որ այս տարի պատրաստվում է ամուսնացնել որդուն: «Ռոզան լավ աղջիկ է, Արծրունին կհավաներ հաստատ», -ասում է:

Այսօր Չարինեն որդու հետ ապրում է Ստեփանակերտում, աշխատում է Ստեփանակերտի կենտրոնական զինվորական հոսպիտալում»՝ որպես բուժքույր:

Փետրվարի 25-ին Արծրունին կդառնար 51 տարեկան: Նրա չապրած տարիներում շատ են չապրած ուրախությունները, չապրած երագանքները, բայց նրա աչքերի ժպիտը կշարունակի ապրել որդու՝ Մերուժանի աչքերում...

3. ԱՎԱԳՅԱՆ

Աֆորիզմներ

Անկախ պայմաններից ու պատճառներից՝ մորթապաշտությունն անողորմ սեսմացնում է տղամարդուն:

Ժամանակի առեղծվածն է, երբ կողպուտը կողպատվողին «կարեկցողի» դերում է հանդես գալիս, ներկայացնում...

Երբեմն շատ փող ունեցողին թվում է, թե շատ խելք էլ ունի, բայց հարկ եղած դեպքում դա ի հայտ չի գալիս:

Սխալ գործողի նկատմամբ հովանավորությունը ոչ թե փրկություն, այլ նախադրյալ է կործանման համար:

Փողը մեծ ուժ է, շատ բան կարող է անել, բայց ոչ ամեն ինչ:

Մեծամտորեն իրեն անպարտելի համարողի պարտությունը վրա է հասնում ժամանակին, ու ոչ ոքի համար անսպասելի կամ զարմանալի չի լինում:

Արդարության համար մարդկության

պայքարն ամենահինն է ու հավիտենականը:

Երբ կուշտը սովածի համար «մանր է բրդում», լավ չէ, բայց երբ այդ էլ չի լինում, էլ ավելի է վատ:

Չարիքի հանդեպ անզոր մարդկանց մխիթարությունն է. «Չկա չարիք առանց բարիքի» ասացվածքը:

Ազատությունը ոմանց համար հանձնարարություն է, քան թե կշռադատված ապրելակերպ:

Ազգը անկեղծորեն սիրողը պարտավոր է ազգակցին հարգել, կարեկցել ու աջակցել:

Եթե ուժ եւ մեծ իրավունքներ ունեցողն արդարացի ու ազնիվ չէ, չարիք է ու վտանգավոր:

Մարդ կյանքում շատ կորուստներ է ունենում, բայց ամենամեծը իր ինքնության կորուստն է:

Կուսակցությունների առաջնությունը ոչ թե ժողովրդի մասին հոգացողների, այլ իշխանության ձգտողների առատություն

է նշանակում:

Հույս սպանելը մարդ սպանելուց շատ չի տարբերվում:

Լավատեսությունը միշտ չէ, որ լավ հետեւանքներ է ունենում, առավել եւս՝ երբ հաշվարկներն իրատեսական չեն լինում:

Ամեն մի գործ էլ ավելի լավ կատարելու տարբերակ է ունենում, որը հայտնաբերում է նա, ով պրպտուն միտք ու ձգտում է ունենում:

Օրենքի գերակայությունը ոմանց համար՝ չկանխարգելված անօրինականությունը որեւէ ձեւով «օրինական» բնույթ տալ է նշանակում:

Պատահում է՝ ներագգային հակամարտություններն ու թշնամանքը նույնքան դաժան ու ավերիչ են լինում, որքան ազգամիջյան հակամարտություններն ու թշնամանքը:

Հնարավոր է հանդիպել նաեւ անառակության այնտեղ, որտեղ միայն սրբություններ պետք է լինեն:

Լավ ազգասերը ձգտում է իր ազգի բարեկամները շատացնել, ոչ թե թշնամիները:

Անկառավարելի, անկանխատեսելի ամբոխն ամեն մի երկրի իշխանության համար նույնքան է վտանգավոր, որքան արտաքին թշնամին:

Կյանքի արժեքն իմանալու համար երբեմն գերեզմանոցի միջով անցնելն օգտակար է:

Տարածված անարդարությունների պայմաններում արդարացի լինելը խիզախություն է, եթե նույնիսկ դատավոր ես:

Էմմա ՊԵՏՐՈՍՅԱՆ

Ցավակցական

ՀՀ-ի Արցախի կառույցը խորին վշտակցություն է հայտնում ընկերուհի Ռիտա Մնացականյանին՝ սիրելի հոր՝ Միքայել Մնացականյանի մահվան առիթով:

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կոմունյանց 17,
հեռ.97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արձարծված տեսակետները չի կիսում: Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻՉԱԿ ՊԼՅՈՒՄ» ՍՊԸ-ում: Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 1000: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ալեսյա Բեջանյան